ՀՈԴՎԱԾՆԵՐ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Ա. Պ. ՄԿՐՏՉՅԱՆ

1925 թ. վերջում հիմնականում ավարտվում է Երևանի գավառի գյուղատնտեսության վերականգնումը։ Ինչպես ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերի, այնպես էլ գյուղատնտեսության համար 1913 թ. մակարդակը վերջնագիծ լինել չէր կարող։ Այն միայն սկիզբն էր ամբողջ ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցումը նախապատրաստելու համար։

1921—25 թթ. ընթացքում նոր տնտեսական քաղաքականության խթանող ուժերը Երևանի գավառի գյուղատնտեսության վերականգնման գործում աստիճանաբար իրենց սպառում են մասնատված գյուղացիական տնտեսությունների շրջանակներում։

1924—26 թթ. ընթացքում գրեթե յուրաքանչյուր տարում կրկնապատկվում է կոոպերացված գյուղացիական տնտեսությունների ընդհանուր թիվը ամբողջ գավառում։ Եթե 1924 թ. տարբեր տիպի արտադրական կոոպերատիվներում ընդգրկված էր գավառի գյուղացիական տնտեսությունների միայն 8,5 տոկոսը, ապա 1925 թ.՝ 14,8 տոկոսը, իսկ 1926 թ.՝ 25,1 տոկոսը[1]։ Ահման այս տեմպերը ցույց են տալիս, որ կոոպերատիվ աշխատանքը տարեցտարի ավելի ու ավելի է համակում գյուղացիությանը։

1926 թ. վերջում գյուղատնտեսական արտադրական կոոպերացիայի ցանցը Երևանի գավառում հետևյալ պատկերն էր ներկայացնում[2]։

Կոոպերատիվներն ըստ տիպերի	Կոոպերատիվների քանակը	Անդամ տնտեսությունների քանակը
1. Գյուղ. վարկային ընկերություններ	7	4647
2. Այգեգործական ընկերություններ	8	848
3. Բամբակագործական ընկերություններ	3	226
4. Խառը գյուղատնտեսական ընկերութ.	4	176
5. Մեղվաբուծական ընկերություններ	2	50
6. Մեքենաօգտագործման ընկերություն.	1	31
7. Ծխախոտագործական ընկերություններ	4	414
8. Ոչխարաբուծական ընկերություններ	2	89
9. Աշխատանքային հողօգտագործման արտելներ	1	28
10. Կոմունա	1	35
11. Կաթնատնտեսական արտելներ	2	62
Ընդամենը	35	6606

1 ՄԼԻ-ի հայկ. մասնաճյուղի արխիվ, ֆ. 4/1, գ. 906, թ. 177։
2 Նույն տեղում։

Դժվար չէ նկատել, որ վերը նշված կոոպերատիվների շարքում ամենատարածված ձևը գյուղատնտեսական վարկային ընկերություններն էին։ Ընդհանուրի մեջ դեռևս փոքր տոկոս էին կազմում այգեգործական, բամբակագործական և այլ գյուղատնտեսական արտադրական կոոպերատիվները։ Վարկային ընկերությունները գլխավորապես զբաղվում էին անհատական գյուղացիական տնտեսություններին դրամով, գյուղգործիքներով և այլ անհրաժեշտ պարագաներով ապահովելու գործով։ Արտադրության տարբեր ոլորտների հանրայնացումը վարկային ընկերություններում համեմատաբար ավելի փոքր էր, քան, ասենք, այգեգործական, բամբակագործական ընկերություններում, աշխատանքային հողօգտագործման արտելներում և առավել ևս՝ կոմունայում։ Ահա թե ինչու ՀԿ(բ)Կ Երևանի գավառային կոմիտեն 1927 թ. սկսած առավել կարևորություն է տալիս այգեգործական, բամբակագործական և նման գյուղատնտեսական արտադրական կոոպերատիվների զարգացմանը։

Եթե 1926 թ. այգեգործական, բամբակագործական, ծխախոտագործական և նման գյուղատնտեսական արտադրական կոոպերատիվներում ընդգրկված էր կոոպերացված տնտեսությունների մոտ մեկ երրորդը, ապա 1928 թ. գարնանը՝ մոտ կեսը։ Բամբակագործական կոոպերացիան, օրըստօրե կազմակերպչորեն ամրանալով, ուժեղանում էր տնտեսապես և իր մեջ ընդգրկում Երևանի գավառի ամբողջ բամբակացան դաշտերի 46,4 տոկոսը[3]։ Ետ չէր մնում նաև այգեգործական կոոպերացիան։ Այն ընդգրկում էր 2166 այգեգործական տնտեսություն կամ գավառի այդօրինակ տնտեսությունների 40 տոկոսը[4]։

Գյուղատնտեսական արտադրական կոոպերացիայի բնագավառում ձեռք բերած նվաճումները բավարար հող են նախապատրաստում անցում կատարելու առավել զարգացած՝ կոլտնտեսային ձևին։ 1928 թ. սկզբներից կոլտնտեսային շարժումը իր առաջին քայլերն է անում նաև Երևանի գավառում։ Գյուղատնտեսական արտադրական կոոպերատիվների կողքին ծնվում են առաջին կոլտնտեսությունները։ Գյուղատնտեսական առաջին արտելը Երևանի գավառում կազմակերպվում է 1928 թ. հունվարի 10-ին, Ղամարլուի շրջանի Վերին Նորաշեն գյուղում[5]։ Այնուհետև նման արտելներ են կազմակերպվում շրջանի Այգեստան, Արտաշատ, Ղամարլու և Բուրաստան գյուղերում։ Նույն շրջանի Ցուվա գյուղում կազմակերպվում է գավառի երկրորդ՝ «Արյունոտ կիրակի» կոչվող կոմունան (առաջինը՝ Ծաղկահովտում)։ Այսպիսով, 1928 թ. սկզբներին Երևանի գավառում սկսում են գործել երկու կոմունա և հինգ գյուղատնտեսական արտել՝ 133 գյուղացիական տնտեսություններով[6]։

ՀԿ(բ)Կ Երևանի գավառային կոմիտեի երրորդ պլենումը (1928 թ. ապրիլ), հաշվի առնելով գավառի տարբեր շրջանների առանձնահատկությունները և ելնելով գյուղատնտեսության կոլեկտիվացման գլխավոր սկզբունքից, անհրաժեշտ է համարում կոլտնտեսությունները կազմակերպել առաջին հերթին Երևանի գավառի Ղամարլուի, Հրազդանի և Վեդի-Բասարի շրջաններում։ Քանի որ կոլտնտեսային շինարարության մեջ դեռևս բացակայում էր անհրաժեշտ փորձը, պլենումը նպատակահարմար է համարում գյուղի սոցիալիստական վերակառուցումը Երևանի գավառում սկսել կոլտնտեսությունների կազմա-

3 ՄԼԻ-ի հայկ. մասնաճյուղի արխիվ, ֆ. 4/1, գ. 1202, թ. 11։
4 Նույն տեղում, թ. 12։
5 «Խորհրդային Հայաստանը թվերով, 1923—27 թթ., վիճակագրական տեղեկատու», էջ 260։
6 Նույն տեղում։

կերպման պարզ ձևերից՝ հողօգտագործման ընկերություններից ու արտելներից և երբեք հանդես չբերել շտապողականություն։ Քննարկվող հարցի առթիվ ընդունված որոշման մեջ նշվում է, որ «կոլտնտեսությունների կազմակերպումը չպետք է լինի վերից փաթաթված», որ անհրաժեշտ է հաշվի առնել գյուղացիների ցանկությունները և կոլտնտեսությունները կազմակերպել միայն ու միայն նրանց համաձայնությամբ[7]։

Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը ինչպես ամենուր, այնպես էլ Երևանի գավառում ընթանում է դասակարգային պայքարի պայմաններում։ Դասակարգային շերտավորման հետևանքով գյուղում տարեցտարի ավելի մեծ կիրառում է ստանում վարձու աշխատանքը։ 1928 թ. վերջում գավառի 28000 գյուղացիական տնտեսություններն ըստ իրենց սոցիալական պատկանելիության բաշխվում են հետևյալ կերպ՝ 46,9 տոկոսը կազմում են չքավորները, 41,5 տոկոսը՝ միջակները, իսկ 11,6 տոկոսը՝ ունևոր ու կուլակային տնտեսությունները[8]։ Անհրաժեշտ էր ամրապնդել չքավոր ու միջակ գյուղացիական տնտեսությունների քաղաքական ու տնտեսական դաշինքը։ Այդ նպատակով ամրապնդվում է չքավորական կոմիտեների գործունեությունը։ 1928 թ. մայիսի 27-ին գումարվում է Երևանի գավառի չքավորական առաջին կոնֆերանսը։ Կոնֆերանսը հավաստիացնում է ՀԿ(բ)Կ Կենտրոնական կոմիտեին, որ գավառի չքավոր գյուղացիությունը, որպես բանվոր դասակարգի ամենահուսալի նեցուկը գյուղում, պատրաստ է հաղթահարելու այն բոլոր դժվարությունները, որ կանգնած են գյուղի սոցիալիստական վերակառուցման ճանապարհին[9]։

1928 թ. սեպտեմբերի 9-ին կուսակցության Երևանի գավառային կոմիտեի չորրորդ պլենումում ընդարձակ զեկուցումով հանդես է գալիս ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Հ. Կոստանյանը։ Զեկուցումը նվիրված էր գյուղում կատարվելիք կոլեկտիվացման աշխատանքներին։ «Եթե նայելու լինենք մեր կոլեկտիվ տնտեսությունների կազմին,— նշում է զեկուցողը,— ապա կտեսնենք, որ այնտեղ գլխավորապես ընդգրկված են չքավորները, իսկ միջակ գյուղացիների ընդհանուր թիվը չնչին է։ Առանց միջակ գյուղացիության գործ սկսել գյուղում չի կարելի, դա կնշանակի միջակին տալ կուլակի ձեռքը։ Երբ չքավորի միջոցով գործ ես սկսում, պետք է այդ գործին մասնակից դարձնել նաև միջակին, այլապես, չքավորի ու միջակի դաշինքը, նրանց զոդումը կլինի վերացական։ Գյուղում մենք ունենք երկու հենակետեր՝ քաղաքական ու տնտեսական։ Քաղաքականը՝ չքավորական խմբակներն են, գյուղխորհուրդները, բջիջները, իսկ տնտեսականը՝ կոոպերատիվ միությունները են, վարկային ընկերությունները և այլն»[10]։ Միջակ գյուղացիության ակտիվ մասնակցությունը վերը նշված կազմակերպություններին կնշանակեր գործնականում ապահովել նրա տնտեսական ու քաղաքական դաշինքը չքավոր գյուղացիության հետ։

Կոլեկտիվ շինարարության գործում մյուս կարևոր բացը զեկուցողը համարում է այն, որ կազմակերպության ներսում դեռևս պահպանվել ու իր գործնական կիրառումն է գտել այն մտայնությունը, որ գյուղատնտեսության սո-

7 ՄԼԻ-ի հայկ. մասնաճյուղի արխիվ, ֆ. 4/1, գ. 1202, թ. 18։

8 «Խորհրդային Հայաստան», № 290, 1928։

9 Նույն տեղում, № 124։

10 Նույն տեղում, № 216։

ցիալիստական վերակառուցումը պետք է սկսել անմիջապես կոմունաների կազմակերպումից։ «Գյուղի սոցիալիստական վերակառուցումը,— նշում է զեկուցողը,— պետք է սկսել ամենապարզ, հասարակ ու գյուղացու համար հասկանալի ձևերից։ Երբեմն կարող է մի համայնական գոմի կառուցումն ավելի խոշոր չափով մեզ մոտեցնել կոլեկտիվ տնտեսությունների գաղափարին, քան այն դեպքում, երբ մենք այդ գործին ձեռնամուխ լինենք կոմունաներից։ Այնտեղ, ուր դեռ դժվար կլինի ստեղծել կոլխոզներ, ստեղծենք աշխատանքի առանձին համայնական միավորներ, որոնք կարող են և կպատրաստեն գյուղացիությանը դեպի աշխատանքի համայնական ձևերը»[11]։

Սվ իրոք, կուսակցության Երևանի գավառային կոմիտեն, տնտեսական կազմակերպությունները պետության կողմից 1928 թ. կոլեկտիվ տնտեսություններին նախատեսվող 97.000 ռ. նպատակային վարկի 72,5 տոկոսը հատկացնում են գավառի երկու կոմունաներին, իսկ մնացածը՝ քսան կոլտնտեսությունների։ Այսպիսով, կոմունայի յուրաքանչյուր անդամի հասնում է 902 ռ., իսկ կոլտնտեսության յուրաքանչյուր անդամի՝ մոտ տասն անգամ պակաս՝ 92 ռ.[12]։ Պլենումը աննորմալ է համարում այս երևույթը և հանձնարարում է կուսակցության Երևանի կոմիտեին, գավառի պետական ու տնտեսական օրգաններին, պետության կողմից հատկացված նպատակային վարկը գլխավորապես ուղղել կոլտնտեսությունների արտադրական բազայի ամրապնդմանը։ Ի՛ր հիմքում պահպանելով կոլտնտեսային շինարարության վերաբերյալ ՀԿ(բ)Կ Երևանի գավառային կոմիտեի III պլենումի որոշումը, IV պլենումը առանձնահատուկ կարևորություն է տալիս չքավոր ու միջակ գյուղացիության տնտեսական ու քաղաքական դաշինքի հետագա ամրապնդմանը։ Պլենումը խնդիր է դնում միջակ գյուղացիությանը լայնորեն մասնակից դարձնել գյուղի սոցիալիստական վերակառուցման աշխատանքներին։ Պլենումը նոր թափ է հաղորդում կոլեկտիվ շինարարությանը. 1928 թ. վերջում կոլեկտիվ տնտեսությունների թիվը Երևանի գավառում հասցվում է 50-ի, որից 4-ը՝ կոմունա, 40-ը՝ գյուղատնտեսական արտել և 6-ը՝ համայնական հողօգտագործման ընկերություն[13]։

1929 թ. սկսած՝ գավառի միջակ գյուղացիությունը ավելի ու ավելի է հակվում դեպի կոլեկտիվ աշխատանքը, ընդգրկվելով գլխավորապես գյուղատնտեսական արտելներում և համայնական հողօգտագործման ընկերություններում։ Մինչև 1929 թ. կեսերը Երևանի գավառի կուսակցական կազմակերպությունները կոլեկտիվ շինարարության գործում ղեկավարվում են ՀԿ(բ)Կ Երևանի գավառային կոմիտեի III և IV պլենումների որոշումներով։ Աշխատանքներում բացակայում է գրոհայնությունը, խստորեն պահպանվում է կամավորության սկզբունքը։ Կիսամյակի ընթացքում Երևանի գավառում կազմակերպվում է ևս 30 կոլտնտեսություն։ Կոլեկտիվ տնտեսությունների ընդհանուր թիվը հասնում է 80-ի, որոնցում ընդգրկվում են 2095 գյուղացիական տնտեսություններ։ 1928—29 թթ. գյուղատնտեսական տարում նրանց կողմից մշակվում է ավելի քան 7357 հեկտար հողատարածություն[14]։ Գավառի գյուղատնտեսության սոցիալիստական սեկտորը տալիս է առաջին արտադրանքը։ 1929 թ. սեպտեմ-

11 Նույն տեղում։
12 Նույն տեղում, № 266։
13 ՀՍՍՀ ՀՀՍԾՊԿԱ, ֆ. 163, գյուղատնտեսության բաժին, գ. 3155, թ. 6։
14 Նույն տեղում։

բերի 29-ին ՀԿ(բ)Կ Երևանի, Էջմիածնի, Դարալագյազի և Մեղրու գավառային կոմիտեների միացյալ պլենումում ընդարձակ զեկուցումով հանդես է գալիս ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար Աղասի Խանջյանը։ Խոսելով հնգամյակի ընթացքում արդյունաբերության, տրանսպորտի, ժողովրդական լուսավորության գործում կազմակերպության անելիքների մասին, զեկուցողը նշում է, որ անհրաժեշտ է «գործնական քայլերի դիմել, Ռուսաստանում մեծ չափով կիրառվող առանձին շրջանների ամբողջական կոլեկտիվացման փորձը կիրառել նաև մեզանում»[15]։ Պլենումը որոշում է արագացնել կոլտնտեսությունների կազմակերպման տեմպերը[16]։

1930 թ. հունվարի 13-ին Երևանի քաղաքային խորհրդի ընդլայնված նիստում գավառը հայտարարվում է համատարած կոլեկտիվացման շրջան[17]։ Նույն թվականի հունվարի 23-ին գումարվում է ՀԿ(բ)Կ Երևանի գավառային կոմիտեի հերթական V պլենումը։

Համատարած կոլեկտիվացման հաջողության պայմանը պլենումը համարում է աջ թեքման դեմ պայքարի ուժեղացումը։ «Կուլակության վերացումը որպես դասակարգ,— նշված է պլենումի նյութերում,— այժմ մեր հիմնական խնդիրներից մեկն է»[18]։ 1930 թ. հունվարի 2-ի գիշերը կուլակների ձեռքով սպանվում են Ղամարլուի շրջանի Աղբաշ գյուղի այգեգործական ընկերության նախագահ, շրջանի հասարակական ակտիվ գործիչ, կոլտնտեսության լավագույն կազմակերպիչ Արտուշ Միրզոյանը, նույն գյուղի այգեգործական ընկերության գանձապահ, կոմերիտական Զավեն Սայադյանը և շրջանի Յուվա գյուղի կոլտնտեսական, կոմերիտական Թորգոմ Սարգսյանը։ Նույն ամսում կուլակները գիշերը սպանում են Յուվայի կոլեկտիվ տնտեսության պահակին և հրդեհում հանրային սեփականությունը[19]։ Գյուղի հասարակական ժողովը 500—600 չքավոր ու միջակ գյուղացիների մասնակցությամբ կուլակների կողմից ձեռնարկած այդ քայլը գնահատում է որպես կազմակերպված տեռոր և որոշում է նրանց նկատմամբ կիրառել ամենախիստ պատժի միջոցները[20]։

1930 թ. փետրվարի 10-ին Երևանում իր աշխատանքն է սկսում գավառի կոլտնտեսականների առաջին համագումարը՝ հազար պատգամավորների մասնակցությամբ։ Ինչպես ՀԿ(բ)Կ Երևանի գավառային կոմիտեի հունվարյան պլենումը, այնպես էլ կոլտնտեսականների առաջին համագումարը, պայքարն իրավացիորեն ուղղելով կոլեկտիվ շինարարության գլխավոր թշնամու՝ աջ թեքման դեմ, անտեսում է այդ թշնամու ջրաղացին ջուր լցնող «ձախ» խոտորումների դեմ պայքարի կազմակերպումը։ Ավելին, համագումարի կողմից ընդունված որոշումը տոգորված էր ձախությամբ։ «Գյուղատնտեսական ամբողջ ինվենտարի համայնացումը,— նշված է որոշման մեջ,— այն նախապայմանն է, որ ապահովում է կոլտնտեսության հետագա... զարգացումը»[21]։

Խախտելով կոլեկտիվացման գործում կամավորության լենինյան սկզբունքը, ՀԿ(բ)Կ Երևանի գավառային և շրջանային կոմիտեները համատարած կո-

15 «Խորհրդային Հայաստան», № 229, 1929։
16 Նույն տեղում։
17 Նույն տեղում, № 13, 1930։
18 Նույն տեղում, № 21։
19 Նույն տեղում, № 30։
20 Նույն տեղում։
21 Նույն տեղում, № 36։

լեկտիվացման տենդով այրված, մոտ երկու ամսվա ընթացքում հիմնականում ավարտում են կոլեկտիվացումը և հախուռն կերպով կոլտնտեսությունների մեջ են ընդգրկում գավառի գյուղացիության հիմնական մասը։ Ընկնելով թվերի ետևից, գավառի շրջանային կոմիտեներում մեծ չափերի են հասնում «ձախ» խոտորումները գյուղի սոցիալիստական վերակառուցման գործում։

Ինչպես հայտնի է, համատարած կոլեկտիվացման աշխատանքներին կարելի է ձեռնամուխ լինել այն ժամանակ, երբ տվյալ շրջանի, գավառի, հանրապետության միջակ գյուղացիությունը իր հիմնական զանգվածով գիտակցելով կոլեկտիվ աշխատանքի առավելությունը անհատականի նկատմամբ, պատրաստ է կամավոր կերպով ընդգրկվելու կոլտնտեսության մեջ։ Առանց այս նախապայմանի, համատարած կոլեկտիվացումը անհնարին է։ Միջակ գյուղացիությունը հանրապետության տարբեր գավառներում, շրջաններում և անգամ հարևան գյուղում տվյալ ժամանակաշրջանում կարող է կանգնած լինել գիտակցական տարբեր մակարդակների վրա։ Եթե հաշվի չի առնվում այս հանգամանքը և հախուռն կերպով ամենուր փորձում են իրականացնել համատարած կոլեկտիվացումը, բնականաբար ոտնահարվում է կամավորության սկզբունքը միջակ գյուղացիության այն շերտի նկատմամբ, որը դեռևս չի գիտակցել կոլեկտիվ աշխատանքի առավելությունը անհատականի նկատմամբ։ Այս դեպքում կամավորության սկզբունքին փոխարինելու է գալիս բռնությունը։ Այս արատավոր պրակտիկան 1930 թ. առաջին ամիսներին իր արտահայտությունը գտավ նաև Երևանի գավառում։ Այդ շրջանում գավառի ոչ բոլոր շրջաններն էին նախապատրաստված ու հասունացած համատարած կոլեկտիվացման համար։ Մինչդեռ 1930 թ. հունվարի 15-ից ՀԿ(բ)Կ Երևանի գավառային կոմիտեն ձեռնամուխ է լինում գավառի համատարած կոլեկտիվացման աշխատանքներին, խնդիր դնելով այն ավարտել մինչև նույն թվականի ամռանը։ «Մի կողմը կուլակն է, մյուս կողմը՝ կոլեկտիվը, ո՞րը կցանկանաք»[22], նման հարցադրման էին արժանանում այն գյուղացիները, որոնք չէին ցանկանում մտնել կոլտնտեսություն։ Սա արհեստականորեն դժգոհություն էր սերմանում միջակ գյուղացիության շրջանում։ Կանգնելով նման երկընտրանքի առաջ, միջակ գյուղացին, կուլակի նկատմամբ կիրառվող քաղաքականությունից վախեցած, գերադասում է մտնել կոլտնտեսություն, նախօրոք վատնելով իր ունեցվածքը։ Բողոքելով նման պրակտիկայի դեմ, Վեդի-Բասարի շրջանի գյուղացիներից մեկը գրում է. «Ես ունեմ 4 եզ, 4 կով։ Ինքս էլ սեփական ուժերովս վարում և ցանում եմ հողերս, չեմ շահագործում ուրիշներին, խորհրդային իշխանությունն իմ սրտին մոտիկ իշխանություն է, իսկ երբ ինձ կուլակ են անվանում, այն ժամանակ ստիպված պիտի լինեմ անասուններս ծախել և տնտեսությունս թուլացնել, որպեսզի ինձ կուլակ չանվանեն»[23]։ Եվ իրոք, 1929 թ. աշնանից սկսած՝ Երևանի գավառում սկսում է անկում ապրել անասունների ընդհանուր գլխաքանակը։

ՀամԿ(բ)Կ Կենտկոմը կոլեկտիվացման գործում կուսակցության գծի խեղաթյուրման բազմաթիվ ահազանգներ ստանալով տեղերից, այն դարձնում է քննարկման նյութ։ 1930 թ. մարտի 14-ի ՀամԿ(բ)Կ Կենտկոմի «Կոլտնտեսային շարժման մեջ կուսակցական գծից կատարվող շեղումների դեմ պայքարելու մասին» որոշման մեջ նշվում է, որ այդ շեղումները հանդիսանում են «կոլտնտեսային շարժման հետագա աճման հիմնական արգելակը և ուղղակի

22 ՄԼԻ-ի հայկ. մասնաճյուղի արխիվ, ֆ. 4/1, գ. 1662, թ. 7։
23 Նույն տեղում, գ. 783, թ. 1։

օգնություն մեր դասակարգային թշնամիներին»[24]։ Դատապարտելով կոլտնտեսային շինարարության մեջ ի հայտ եկած ձախ խոտորումները, Կենտկոմը պարտավորեցնում է կուսակցական կազմակերպություններին վերջ տալ կոլեկտիվացման հարկադրական մեթոդներին և խստորեն պահպանել այդ գործում կամավորության լենինյան սկզբունքը։

1930 թ. ապրիլի 9-ին Երևանում գումարվում են գավառի կուսակցական կազմակերպությունների փնջային ժողովներ, որոնցում «կոլտնտեսային շինարարության և գարնանացանի ընթացքի մասին» զեկուցումներով հանդես գալիս Հ. Կոստանյանը, Ա. Խանջյանը, Թ. Մանդալյանը և Ամատունին։ ՀԿ(բ)Կ Երևանի գավառային կազմակերպության փնջային ժողովները հավանություն էն տալիս ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1930 թ. մարտի 14-ի և ապրիլի 2-ի որոշումներին, բացահայտում ու դատապարտում են կազմակերպության ներսում կոլեկտիվացման գործում տեղ գտած գռեհիկ աղավաղումներն ու ծայրահեղությունները և նշում են, որ ներկա մոմենտի առանձնահատուկ պայմաններում ձախ խոտորումների դեմ տարվող պայքարը հանդիսանում է աջ օպորտունիզմի դեմ հաշող պայքարելու նախապայմանն ու յուրահատուկ ձևը[25]։

1930 թ. ապրիլի 13-ին ՀԿ(բ)Կ Երևանի գավառային կոմիտեն քննության է առնում ՀամԿ(բ)Կ Կենտկոմի ապրիլի 2-ի, ՀամԿ(բ)Կ Անդրերկրամի ապրիլի 10-ի, ՀԿ(բ)Կ Կենտկոմի ապրիլի 7-ի կոլտնտեսային շինարարության վերաբերյալ որոշումները։ ՀԿ(բ)Կ Երևանի գավառային կոմիտեն հավանություն է տալիս այդ որոշումներին, խնդիր դնելով այդուհետև գյուղի սոցիալիստական վերակառուցման գործում անշեղորեն ղեկավարվել այդ որոշումներով։ Կուսակցության Երևանի կոմիտեն ընդունում է կոլեկտիվ շինարարության գործում իր կողմից թույլ տված հետևյալ սխալները՝ կոմիտեն ժամանակին միջոցներ չի ձեռնարկել ու չի կանխել առանձին շրջանների միջև կոլեկտիվացման գործում առաջացած վատառողջ մրցակցությունը, ավելին, ինքն է խրախուսել ու հրահանգավորել՝ ավարտել համատարած կոլեկտիվացումը գավառում սեղմ ժամկետում, որը բնականաբար ծնել է այդ վատառողջ մրցակցությունը։ Կոմիտեն անտեսել է գավառի տարբեր շրջանների միջև եղած առանձնահատկությունները, ժամանակին չի կանխել միջակներին կուլակաթափ անելու վտանգավոր պրակտիկան։ Չնայած այն բանին, որ վերը նշված սխալները արդեն իսկ առկա էին 1930 թ. հունվարին, սակայն գավառային կոմիտեի հունվարյան պլենումը քննարկելով կոլեկտիվ շինարարության հարցը, անհրաժեշտ չհամարեց պայքարը ուղղել ձախ խոտորումների դեմ։ ՀԿ(բ)Կ Երևանի գավառային կոմիտեն միաժամանակ արձանագրում է այն խոշոր դրական աշխատանքները, որ կատարել են սկզբնական կուսակցական կազմակերպությունները կոլեկտիվ տնտեսությունների կազմակերպման ու այդ գործում տեղ գտած թերությունների վերացման ուղղությամբ։ Որոշման մեջ նշվում է, որ շտկելով սխալները, ցրելով «թղթե» կոլտնտեսությունները և ուժեղացնելով կամավոր հիմունքներով ստեղծված կոլեկտիվ տնտեսությունների արտադրական բազան, կուսակցության Երևանի կոմիտեն դրանով իսկ կայուն նախադրյալ է ստեղծում գյուղի սոցիալիստական վերակառուցման հետագա ծավալման համար։ ՀԿ(բ)Կ Երևանի գավառային կոմիտեն վճռականապես դատապարտում է կազմակերպու-

24 «ՍՄԿՊ-ն բանաձևերում», մաս 2-րդ, էջ 846։

25 «Խորհրդային Հայաստան», № 84, 1930։

թյան այն կոմունիստներին, որոնք փորձում են կուսակցության պայքարը ձախ խոտորումների դեմ ներկայացնել որպես նահանջ գյուղի կոլեկտիվացման, նրա սոցիալիստական վերակառուցման քաղաքականությունից։ Նման ելույթները, որոնք օբյեկտիվորեն ուղղված էին ի պաշտպանություն կոլեկտիվացման բռնի մեթոդների, ՀԿ(բ)Կ Երևանի գավառային կոմիտեի պլենումը որակում է որպես հակակուսակցական ելույթներ կուսակցության գլխավոր գծի հանդեպ[26]։ Երգավկոմը կոչ է անում ամբողջ կազմակերպությանը արժանի հակահարված տալ բոլոր այն տարրերին, որոնք կփորձեն պաշտպանել «ձախ» սխալները, կոլեկտիվացման բռնի մեթոդները։

Պլենումը գտնում է, որ անհրաժեշտ է պայքարը մղել երկու ճակատով՝ ինչպես ձախ, այնպես էլ աջ թեքումների դեմ։ Որոշման մեջ նշվում է, որ աջ թեքումը եղել և շարունակում է մնալ գյուղի սոցիալիստական վերակառուցման գլխավոր թշնամին[27]։ ՀԿ(բ)Կ Երևանի գավառային կոմիտեի ապրիլյան պլենումը, բացահայտելով կոլեկտիվ շինարարության գործում թույլ տված սխալները, դրանց վերացման կուրս է վերցնում։

Պլենումից անմիջապես հետո լուծարքի են ենթարկվում գավառի բոլոր այն կոլտնտեսությունները, որոնք կազմակերպվել էին հարկադրանքով։ Իրենց սեփականության նկատմամբ վերականգնվում են միջակ գյուղացիական այն տնտեսությունների իրավունքները, որոնք ունեզրկվել էին, դասվելով կուլակների շարքը։ Գյուղացիությանն են վերադարձվում ոչ հիմնական արտադրամիջոցները, գյուղատնտեսական ինվենտարը։ Սխալների շտկումով կոլեկտիվ շինարարությունը գավառում մտնում է իր բնական հունի մեջ, չքավոր ու միջակ գյուղացիական նորանոր տնտեսություններ կամովին ընդգրկվում են կոլտնտեսություններում։ Կոլեկտիվ շինարարությունը գավառում գլխավորապես սկսում է զարգանալ խորությամբ։ 1930 թ. աշնանը այն նվաճում է հետևյալ բնագծերը.

ա) Ըստ կոլտնտեսությունների տիպերի, արտադրական ճյուղերի և սոցիալական կազմի[28]

Կոլեկտիվ տնտեսության տիպերը	Ընդհանուր թիվը	Անդամների թիվը	Բատրակներ	Գյուղացիներ	Միջակներ	Բանվորներ	Մասնագետներ
Հողօգտագործման ընկերություններ	30	1384	132	955	261	9	27
Գյուղատնտեսական արտելներ	116	7172	832	3904	2062	72	302
Կոմունաներ	3	517	132	162	73	150	—
Ընդամենը	149	9073	1096	5021	2396	231	329

26 Նույն տեղում, № 89։

27 Նույն տեղում։

28 ՀՍՍՀ ՀՀՍՇԳԿԱ, ֆ. 163, գյուղատնտեսության բաժին, գ. 3157, թ. 12։

բ) Ըստ արտադրական կարողության[29]

Կոլեկտիվ տնտեսության տիպերը	Ցանքատարածություն (հեկտար բնույթով)	Գյուղատնտ. գործիքներ	Մատղաշ տոհմ. գլուխներ	Խոշոր եղջ. անասուններ	Մանր եղջ. անասուններ	Գյուղ. մեքենաներ
Հողօգտագործման ընկերություններ	2037	62	161	467	1014	6
Գյուղատնտեսական արտելներ	9561	554	1300	4533	9801	49
Կոմունաներ	576	27,5	32	162	2590	3
Ընդամենը՝	12174	643,5	1493	5162	13405	58

Դժվար չէ նկատել, որ գյուղացիական տնտեսությունների սոցիալիստական վերակառուցման ամենակենսունակ ձևը տվյալ ժամանակաշրջանում գյուղատնտեսական արտելն էր։ Մինչդեռ հայտնի է, որ սովետական կարգերի հաստատման առաջին տարիներին գավառում զգալի տարածում էին գտել կոմունաները, որոնց թիվը հաշվվում էր տասնյակներով։ 1930 թ. Երևանի գավառում շարունակում են գոյատևել ընդամենը երեք կոմունաներ։ Աստիճանաբար չքանում էին կոմունաները, իրենց տեղը զիջելով գյուղացիության համար առավել հասկանալի արտադրական կոոպերացիային՝ գյուղատնտեսական արտելին։ Բնորոշ է նաև այն, որ կոլեկտիվ տնտեսությունների երեք ձևերն էլ խարսխվում են գավառի գյուղատնտեսության առավել ապրանքայնացված ճյուղերի՝ բամբակագործության, խաղողագործության, այգեգործության, անասնապահության և հացահատիկային կուլտուրաների մշակության վրա։

Նկատելի է նաև այն, որ գավառի 149 կոլեկտիվ տնտեսություններում գլխավորապես ընդգրկված են չքավոր ու միջակ գյուղացիական տնտեսություններ։ Եվ դա պատահական չէր։ Եթե 1928 թ. սկզբներին գավառի նոր կազմակերպվող կոլտնտեսություններում միջակ գյուղացիական տնտեսությունների տոկոսն աննշան էր, ապա 1929 թ. աշնանից սկսած՝ պատկերը փոխվում է։ Միջակ գյուղացիության շրջանում սկսվում է բեկումը դեպի կոլեկտիվ աշխատանքը և հարյուրավոր ընտանիքներ կամովին ընդգրկվում են կոլտնտեսություններում։ Ընդ որում, միջակ գյուղացիության համար գյուղատնտեսական արտելը դառնում է կոլեկտիվ աշխատանքի ամենահասկանալի սոցիալիստական ձևը։ Այդ մասին է վկայում այն փաստը, որ գավառի 116 գյուղատնտեսական արտելներում միջակ գյուղացիները կազմում են բոլոր անդամների մոտ 50 տոկոսը։ Այս փաստը խոսում է նաև այն մասին, որ գյուղատնտեսական արտելը, ինչպես կոմունաների, այնպես էլ համայնական հողօգտագործման ընկերությունների նկատմամբ հանդիսանում է ամենակենսունակ ձևը գյուղի սոցիալիստական վերակառուցման գործում։ Ինչ վերաբերում է կոլտնտեսու-

29 Նույն տեղում, թ. 9, 10։

թյունների նյութատեխնիկական բազային, ապա վերը զետեղված աղյուսակից պարզ երևում է, որ այն հիմնականում ստեղծված է ինչպես կոլտնտեսականների սեփական, այնպես էլ պետության կողմից տրված միջոցներով։

ЗА СОЦИАЛИСТИЧЕСКОЕ ПРЕОБРАЗОВАНИЕ СЕЛЬСКОГО ХОЗЯЙСТВА

А. П. МКРТЧЯН

Резюме

С начала 1928 г. колхозное движение в Ереванском уезде делало первые шаги. Рождались коллективные хозяйства. Ереванская уездная партийная организация возглавила это движение, идущее снизу, строго соблюдая принцип добровольности. Однако V пленум Ереванской уездной организации КП(б)А (5 января 1930 г.), игнорируя опасность, идущую «слева», объявил уезд районом сплошной коллективизации. Гонясь за высокими показателями, районы уезда фактически начали соревнование, зачастую допуская при этом левацкие перегибы. Уездный партийный пленум (13 апреля 1930 г.), обсудив решения пленумов ЦК ВКП(б) от 14 марта и 2 апреля, взял курс на исправление допущенных ошибок. После этого партийные организации развернули борьбу не только против правого, но и левого уклонов. Колхозное движение в уезде начало развиваться довольно успешно.